Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր

27-33.3-Ղ4-2 Բաժնի պետ(2024-03-22)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

Ներքին գործերի նախարարություն | Աղետների և արտակարգ այլ իրավիճակների կառավարման վարչություն | Հետաղետային վերականգնման կառավարման բաժին | Բաժնի պետ, (27-33.3-Ղ4-2)

1.2 Ենթակա և հաշվետու է

Բաժնի պետն անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին**:**

1.3 Ենթակա և հաշվետու պաշտոններ

Բաժնի պետին անմիջական ենթակա և հաշվետու են Բաժնի աշխատողները:

1.4 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետի տեղակալը կամ Բաժնի գլխավոր մասնագետը:

1.5 Աշխատավայր

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Նալբանդյան փ. 130:

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. ապահովում է հետաղետային վերականգնման ոլորտում Նախարարության քաղաքականության իրականացման համակարգումը.
2. ապահովում է հետաղետային վերականգնման ոլորտին առնչվող տեղեկատվությունների ամփոփումը և վերլուծումը, անհրաժեշտության դեպքում՝ ոլորտային ուսումնասիրությունների կատարումը.
3. ապահովում է հետաղետային վերականգնման ոլորտի զարգացման հիմնախնդիրներով առաջարկությունների ներկայացման աշխատանքները.
4. ապահովում է հետաղետային վերականգնման ոլորտին առնչվող միջազգային ծրագրերով նախատեսված միջոցառումների մշակման աշխատանքների համակարգումը.
5. ապահովում է հետաղետային վերականգնման գործընթացների իրականացմանն ուղղված կարգերի, պլանների, ուղեցույցների, մեթոդական ձեռնարկների և այլ փաստաթղթերի նախագծերի մշակումը.պ
6. ապահովում է հետաղետային վերականգնման ոլորտի միջազգային ծրագրերով նախատեսված աշխատանքներին, համատեղ իրականացվող ծրագրերին, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, քննարկումներին, սեմինարներին և այլ միջոցառումներին մասնակցությունը:

Իրավունքները.

- պահանջել և ստանալ համապատասխան նյութեր հետաղետային վերականգնման ոլորտին առնչվող միջազգային փորձի ուսումնասիրությունների, հետազոտությունների վերաբերյալ և ներկայացնել ոլորտի կատարելագործմանն ու բարեփոխմանն ուղղված մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ.
- պահանջել և ստանալ անհրաժեշտ նյութեր, փաստաթղթեր, տեղեկանքներ համապատասխան մարմիններից, միջազգային կազմակերպություններից հետաղետային վերականգնման ոլորտի զարգացման հիմնախնդիրների ուսումնասիրման և բացահայտման, համեմատական վերլուծության և համադրման ու առաջարկությունների ներկայացման նպատակով.
- պահանջել և ստանալ համապատասխան նյութեր, հուշագրեր, համաձայնագրեր և այլ փաստաթղթեր հետաղետային վերականգնման ոլորտին առնչվող միջազգային ծրագրերով նախատեսված միջոցառումների մշակման աշխատանքների նպատակով.
- պահանջել և ստանալ կարծիքներ, առաջարկություններ, հաշվետվություններ համատեղ իրականացվող ծրագրերի, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումների, խորհրդակցությունների, քննարկումների, սեմինարների ընթացքում քննարկվող խնդիրների վերաբերյալ.
- ներգրավվել և ընդգրկվել հետաղետային վերականգնման ոլորտի միջազգային ծրագրերով նախատեսված աշխատանքներին, համատեղ իրականացվող ծրագրերին, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, քննարկումներին, սեմինարներին և այլ միջոցառումներին:

Պարտականությունները.

- հսկել հետաղետային վերականգնման ոլորտում Նախարարության քաղաքականության իրականացման, ոլորտի զարգացման, կատարելագործման և բարեփոխման գործընթացները.
- վերլուծել և գնահատել հավանական ռիսկերը և ներկայացնել առաջարկություններ հետաղետային վերականգնման ոլորտի վերաբերյալ.

- ներկայացնել Վարչության պետին հետաղետային վերականգնման ոլորտին առնչվող միջազգային փորձի ուսումնասիրման արդյունքները և դրանց հետ կապված համապատասխան նյութեր ոլորտի կատարելագործման և բարեփոխման նպատակով.
- ներկայանալ հետաղետային վերականգնման ոլորտի միջազգային ծրագրերով նախատեսված աշխատանքներին, համատեղ իրականացվող ծրագրերին, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, քննարկումներին, սեմինարներին և այլ միջոցառումներին:
- վերլուծել և ամփոփել համապատասխան փաստաթղթերը, նյութերը (պլան-ծրագրեր, վարքականոների վերաբերյալ ուղեցույցներ և այլն) հետաղետային վերականգնման ոլորտում Նախարարության քաղաքականության իրականացման նպատակով.
- վերլուծել և ամփոփել հետաղետային վերականգնման ոլորտին առնչվող տեղեկատվությունները և անհրաժեշտության դեպքում՝ նախաձեռնել ոլորտային անալիտիկ հետազոտությունների և ուսումնասիրությունների իրագործման աշխատանքներ.
- մշակել անալիտիկ վերլուծության արդյունքում հետաղետային վերականգնման գործընթացների իրագործմանն ուղղված կարգերի, պլանների, ուղեցույցների, մեթոդական ձեռնարկների և այլ փաստաթղթերի նախագծերը.

---

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն**:**

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
  - Խնդրի լուծում
  - Բարեվարքություն
  - Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
  - Որոշումների կայացում
  - Ծրագրերի կառավարում
  - Աշխատակազմի կառավարում
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Կառավարում արտակարգ իրավիճակներում
  - Բանակցությունների վարում
  - Փոփոխությունների կառավարում
  - Ժամանակի կառավարում
  - Փաստաթղթերի նախապատրաստում

---

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի, այլ պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ իր իրավասությունների շրջանակներում:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային միավորի գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ: